

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | 2008

ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության
գործունեության

ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) իր հիմնական գործունեությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 480 որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա:

Նախարարության 2008 թվականի գործունեության ծրագրային հիմք են հանդիսացել՝

- Ø ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագիրը,
- Ø ԼՂՀ կառավարության գործունեության ծրագիրը,
- Ø ԼՂՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը:

2008 թվականին նախարարության կողմից տարվող տնտեսական քաղաքականությունն ուղղված էր կայուն զարգացող և մրցունակ տնտեսության ստեղծմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացմանը և արտադրողականության բարձրացմանը:

Նախարարության կողմից իրականացված միջոցառումներն ուղղված էին՝

- ⇒ գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմանը,
- ⇒ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության արդյունավետության բարձրացմանը,
- ⇒ տարածքային համաչափ զարգացման ապահովմանը,
- ⇒ արտաքին տնտեսական գործունեության խթանմանը,
- ⇒ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը,
- ⇒ ինովացիոն գործունեության զարգացմանը,
- ⇒ զբոսաշրջության զարգացմանը,
- ⇒ համապատասխանության զնահատման ու մտավոր սեփականության պաշտպանության համակարգերի զարգացմանը և տեխնիկական անվտանգության ապահովմանը,
- ⇒ շուկայի և սպառողների շահերի պաշտպանությանը,
- ⇒ պետական նյութական պահուստի ձևավորմանը,
- ⇒ ենթակառուցվածքների զարգացմանը,
- ⇒ ընդերքօգտագործման արդյունավետության բարձրացմանը,
- ⇒ պետական գույքի կառավարման միասնական համակարգի ներդրմանը,
- ⇒ պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը,
- ⇒ հասարակայնության հետ կապերի խորացմանը :

Նշված նպատակներին ուղղված քաղաքականության շրջանակներում Նախարարությունը մշակել ու կառավարության քննարկմանն է ներկայացրել 129 ԼՂՀ կառավարության որոշման և 12 ԼՂՀ օրենքի նախագծեր:

ԼՂՀ կառավարության ծրագրով ամրագրված տնտեսական քաղաքականության հետևողական իրագործման արդյունքում 2008 թվականին համախառն ներքին արդյունքն աճեց 14.3 տոկոսով, կազմելով 87.1 մլրդ դրամ, որը ապահովվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրված աճի հաշվին: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով կազմել է 2036.5 ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 1489.5 ԱՄՆ դոլարի դիմաց: Աճել են նաև բնակչության դրամական եկամուտները՝ 16.9 տոկոսով, միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 17.3 տոկոսով:

Նախարարության կողմից իրականացված մի շարք վերլուծությունների արդյունքում բացահայտվել են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ կապված տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, տնտեսության դիվերսիֆիկացման, կադրերի պատրաստման, տարածքային անհամաչափությունների հաղթահարման, գործարար միջավայրի բարելավման, գործարարությանը պետական աջակցության արդյունավետության բարձրացման և տնտեսության առանձին ճյուղերի զարգացման հետ: Նշված հիմնախնդիրներն արտացոլվել են Նախարարության եռամյա ռազմավարությունում:

Նախարարության գործունեության հիմնական ուղղությունները

Գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի բարելավում

ԼՂՀ տնտեսական աճի և տնտեսական մրցունակության ապահովման գործում կարևորելով բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի դերը, ինչպես նաև նպատակ դնելով գործարար միջավայրը դարձնել երկրի մրցակցային առավելություններից մեկը՝ Նախարարության կողմից աշխատանքներ են տարվել հանրապետությունում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու նրա մրցունակության բարձրացմանը և տնտեսության մասնավոր հատվածի կայուն զարգացմանը:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված Նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներով մշակվել է Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը, որտեղ ընդգրկվել են պետական կարգավորման 12 բնագավառներում մի շարք համալիր միջոցառումների իրագործում՝ ներառելով օրենսդրական, ընթացակարգային, վարչարարական, ինչպես նաև պետության և գործարար աշխարհի փոխգործակցության մեխանիզմների փոփոխությունը և գործարարությանը պետական աջակցության դիվերսիֆիկացումն ու արդյունավետության բարձրացումը:

Գործարարության և ներդրումների համար բարենպաստ մթնոլորտի ապահովման, գործարարությանը օժանդակման, ներդրումների խթանման, գործարարությանն ու ներդրումներին առընչվող վարչարարական խոչընդոտների վերացման, գորարարների ու պետական մարմինների միջև փոխհարաբերությունների համակարգման և արդյունավետ համագործակցության մեխանիզմների ստեղծման և տնտեսական քաղաքականության մշակմանը գործարարների մասնակցության ապահովման նպատակով Նախարարության առաջարկությամբ ստեղծվեց Գործարարության աջակցման խորհուրդ:

Երկրի մրցակցային առավելությունների բացահայտման, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավման և, վերջինիս հիման վրա, տնտեսական զարգացման ապահովման նպատակով մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգը, որն արտահայտում է ներդրումային քաղաքականության ընդհանուր մոտեցումներն ու ռազմավարությունը և իրենից ներկայացնում է խնդիրների, սկզբունքների ու նպատակների համակցություն:

Թվարկված նպատակների իրագործման նպատակով հայեցակարգով նախատեսվում է իրականացնել մի շարք առաջնահերթ քայլեր, որոնց ուղղությամբ նախարարության կողմից արդեն իսկ տարվում են աշխատանքներ:

Հայեցակարգով ամրագրվել են ԼՂՀ-ում ներդրումների համար գերակա հիմնական ոլորտները, որոնց գծով ներդրումների ներգրավման նպատակով Արցախի ներդրումային հիմնադրամի հետ գործարար ծրագրեր են մշակվում և աշխատանքներ իրականացվում պոտենցիալ ներդրողների շրջանակներում:

ՓՄՁ պետական աջակցության արդյունավետության բարձրացում

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրության դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, երկրում սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ նախարարությունն աշխատանքներ է իրականացրել ՓՄՁ-ի պետական աջակցության և զարգացման, պետական աջակցության խորացման, դիվերսիֆիկացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ՓՄՁ-ի պետական աջակցությանն ու զարգացմանը, գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանը, ինչպես նաև նշված հիմնախնդիրների լուծմանն է ուղղված նախարարության կողմից մշակված ՓՄՁ պետական աջակցության ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ապահովվեց 2835,4 մլն դրամի վարկերի տրամադրումը ՓՄՁ սուբյեկտներին, որից 2667,4 մլն դրամը՝ «վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում Արցախի ներդրումային հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի սեփական միջոցների հաշվին, իսկ 168,0 մլն դրամը՝ «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն» ենթածրագրի շրջանակներում հիմնադրամի միջոցների հաշվին: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման գումարը կազմել է 74,3 մլն դրամ: Իրականացվել են նաև արտադրական հզորությունների վերազինման աջակցությանը, ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցությանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:

Նախարարությունը մասնակցել է ՓՄՁ-ի պետական աջակցության ենթածրագրերի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորմանը, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, փոխառությունների տրամադրման, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներում առաջնղման աջակցության, ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության, ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագրերի իրականացման կարգերի մշակման աշխատանքներին:

ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության ընդլայնման և տարբերակման նպատակով ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության 2009 թվականի ծրագրում նախատեսվել է նոր՝ ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ենթածրագիր, որի նպատակն է առավել խոշոր գործարար ծրագրերում ֆինանսական աջակցությունն ուղղել ոչ թե փոխառությունների տրամադրման տեսքով, այլև բաժնեմասերի կամ փայամասնակցության ձեռքբերմանը և այն հետագայում վաճառելուն՝ հիմնված բաժնեմասի հաշվեկշռային կամ շուկայական գնի աճի և ձեռնարկատիրական շահույթից ակնկալվող շահութաբաժնի սկզբունքի վրա:

2008 թվականից մշակվել ու իրականացվել է «Արցախբանկ» ՓԲԸ-ում պետության կողմից ավանդադրված գումարների հաշվին արտոնյալ վարկային ծրագիրը, ինչը հնարավորություն տվեց իրական հատված ուղղել և առավել արդյունավետ օգտագործել նշված ֆինանսական միջոցները: Նշված ծրագրի շրջանակներում արտոնյալ պայմաններով վարկավորվել են արդյունաբերության, գյուղատնտեսության և արտադրության այլ ոլորտներում մի շարք գործարար ծրագրեր:

Տարածքային համաչափ զարգացման ապահովում

Նախարարության կողմից մշակվել է ԼՂՀ շրջանների զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգ, որը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների զարգացման ծրագրերի կազմման և իրագործման հիմնական սկզբունքները և մեթոդաբանությունը: Շրջանների զարգացման ծրագրերի մշակումն ուղղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկարատև, կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող խնդիրների առաջադրմանն ու շրջանների համաչափ զարգացման ապահովմանը, տնտեսական

աճի արդյունքների տարածքային համաչափ բաշխման ապահովմանը և շրջանների զարգացման անհամաչափությունների նվազեցմանը:

Շրջանների զարգացման ծրագրերը մշակվելով հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության ու գործարար շրջանակների մասնակցությամբ՝ հստակ ու ամբողջական պատկերացումներ ու տեսակետներ կձևավորեն շրջանին բնորոշ հիմնախնդիրների, դրանց առաջնահերթությունների և զարգացման առանձնահատկությունների մասին:

Համայնքների ֆինանսական համակարգի կարգավորման և բյուջեների կառուցվածքի բարելավման նպատակով օրենսդրական փոփոխություններ են կատարվել տեղական տուրքերի և վճարների կարգավորման ոլորտում:

Արտաքին տնտեսական գործունեության խթանում

Նախարարության կողմից միջոցառումներ են իրականացվել արտաքին տնտեսական գործունեության խթանման, ապրանքների արտահանման նպատակով արտաքին կապերի ստեղծման և արտաքին շուկաների ուսումնասիրման ուղղություններով: Արտերկրի, և մասնավորապես Ռուսաստանի Դաշնության գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ԼՂՀ-ում արտադրվող ապրանքների արտահանման և իրացման հարցերի կազմակերպման ուղղությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացում

ԼՂՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և տեղեկատվական հասարակության կայացման տեսլականն ու նպատակները, մարտահրավերները, դրանց հաղթահարման ռազմավարական մոտեցումներն ու իրականացման փուլերն ամրագրելու նպատակով մշակվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի նախագիծ:

ԼՂՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի ձևավորմանն ուղղված Նախարարության կողմից շարունակվել են ԼՂՀ-ում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային թվային ստորագրության ներդրման և այդ գործունեության հետ կապված ոլորտի ձևավորմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, մի շարք որոշումների մշակմամբ համալրվել է տվյալ բնագավառում գործունեության հիմքն ապահովող օրենսդրական դաշտը:

Աշխատանքներ են իրականացվել տնտեսության տարբեր ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ, մասնավորապես աշխատանքներ են տարվել ԼՂՀ-ում հեռահար ուսուցման համակարգի ձևավորման ուղղությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կադրերի վերապատրաստման, տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության համատեղ ծրագրերի իրականացման փոխհամաձայնություն է ձեռք բերվել Ռուսաստանի Դաշնության մի շարք ընկերությունների հետ:

Ինովացիոն գործունեության զարգացում

Երկրի կայուն և անվտանգ զարգացման ու մրցունակության, բարենպաստ ինովացիոն միջավայրի ապահովման, համաշխարհային տնտեսական համակարգում տնտեսական և գործընկերային գրավչություն ունեցող ինովացիոն համակարգի հետևողական ձևավորման, դրա հիմքերը դնելու համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերի և ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացմանն ուղղված քաղաքականության մոտեցումների և սկզբունքների ամրագրման նպատակով մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգ:

Հայեցակարգի նպատակը երկրի կայուն և անվտանգ զարգացման ու մրցունակության, բարենպաստ ինովացիոն միջավայրի ապահովման, համաշխարհային տնտեսական համակարգում տնտեսական և գործընկերային գրավչություն ունեցող ինովացիոն համակարգի

հետևողական ձևավորման, նրա հիմքերը դնելու համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերի և ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացմանն ուղղված քաղաքականության մոտեցումների և սկզբունքների ամրագրումն է:

Տնտեսության տեխնոլոգիական մակարդակի հագեցվածության բարձրացմանը նպատակուղղված Նախարարության կողմից աշխատանքներ են տարվել ինովացիոն համակարգի ձևավորման միջնաժամկետ ծրագրի մշակման ուղղությամբ:

Ջրոսաշրջության զարգացում

Հաշվի առնելով ԼՂՀ-ում առկա զբոսաշրջային ներուժն ու կարևորելով զբոսաշրջության դերը տնտեսական զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, տարածքային համաչափ զարգացման գործում՝ 2008թ. Նախարարությունը հետևողական քայլեր է ձեռնարկել զբոսաշրջության բնագավառի զարգացման ուղղությամբ:

Մշակվել է զբոսաշրջության զարգացման հայեցակարգի նախագիծ, որով բնութագրվել ու գնահատվել են ԼՂՀ զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջության զարգացման միտումները և հեռանկարները, ներկայացվել են զբոսաշրջության ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակները, գնահատվել մարտահրավերները և խոչընդոտները, ու սահմանվել նպատակների իրականացման համար պետական քաղաքականության խնդիրները, ուղղություններն ու սկզբունքները:

2008 թվականի 2-րդ կիսամյակում զբոսաշրջության բնագավառում պետական կառավարման լիազորությունները ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչությանը վերապահելու կապակցությամբ՝ զբոսաշրջության զարգացման հայեցակարգի նախագիծը չի ներկայացվել կառավարության քննարկմանը և ԼՂՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված թվով 3 միջոցառման մասով աշխատանքներ չեն իրականացվել:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ և Նախարարության համապատասխան աշխատանքների միջոցով ապահովվել է «Բազզ Բիզնես» կազմակերպության կողմից ՀՀ զբոսաշրջության մասին նկարահանվող վավերագրական ֆիլմում ԼՂՀ զբոսաշրջային ներուժի մասին տեղեկատվության ընդգրկումը, որը հեռարձակվում է միջազգային հեղինակավոր հեռուստաալիքներով:

Համապատասխան աշխատանքներ են տարվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2008 թվականի ծրագրի իրականացման ուղղությամբ:

Համապատասխանության գնահատման և մտավոր սեփականության պաշտպանության համակարգի ձևավորում և տեխնիկական անվտանգության ապահովում

Համապատասխանության գնահատման և մտավոր սեփականության պաշտպանության լիարժեք համակարգերի ձևավորման նպատակով տվյալ բնագավառում նախարարության կողմից աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և նրա առանձնացված ստորաբաժանումների հետ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան համակարգերին ինտեգրվելու նպատակով:

Փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվել, և արդեն իսկ սկսվել է նշված բնագավառներում աշխատանքների իրականացման գործընթացը՝ ուղղված ԼՂՀ տարածքում գործող փորձարկման լաբորատորիաները Հայաստանի Հանրապետության ազգային մարմնի կողմից հավատարմագրմանը և երկու երկրների միջև սերտիֆիկատների ու համապատասխանության նշանների փոխադարձ ճանաչմանը և մտավոր սեփականության պաշտպանության համակարգերի միացմանը:

«Ստանդարտացման մասին» ԼՂՀ օրենքի դրույթներին համապատասխան մշակվել են էներգետիկայի օբյեկտներին և սննդամթերքներին վերաբերող մի շարք տեխնիկական կանոնակարգեր և կանոններ:

Հաշվետու տարում հավատարմագրվել է երեք փորձարկման լաբորատորիա:

Սննդամթերքի ֆիզիկա-քիմիական, թունաբանական և մանրէաբանական փորձարկումների և չափագիտական աշխատանքների կազմակերպման համար ձեռք են բերվել 4,2 մլն դրամ արժողությամբ համապատասխան սարքավորումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում համապատասխան աշխատանքներ են տարվել տեխնիկական անվտանգության ոլորտը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման և դրանց հաստատման ուղղությամբ:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ԼՂՀ օրենքի պահանջների՝ միջոցառումներ են իրականացվել ուղղված արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննությունների իրականացման, պետական ռեեստրի վարման և վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Շուկայի և սպառողների շահերի պաշտպանություն

Առևտրի ոլորտում սպառողների շահերի պաշտպանվածության բարձրացման նպատակով օրենսդրական փոփոխություններ են մտցվել առևտրի օբյեկտներին ներկայացվող պահանջների մեջ՝ կապված վաճառքի կազմակերպման գործընթացի հետ, սահմանվել է առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հսկողության իրականացման կարգը:

Իրականացվել են առևտրի և հանրային սննդի օբյեկտներում 109 ստուգումներ, որից 102-ում հայտնաբերվել են կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների պահպանման նկատմամբ խախտումներ: 24 տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառվել են նշված խախտումների համար վարչական օրենսգրքով նախատեսված համապատասխան տուգանքներ՝ 1850,0 հազ.դրամի չափով: Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից միջոցներ են ձեռնարկվել նշված ոլորտներում հետագա խախտումները նվազեցնելու ու կանխելու համար:

Պետական նյութական պահուստ

Ելնելով «Պետական նյութական պահուստի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներից՝ մշակվել են պետական պահուստի ձևավորմանը, օգտագործմանն ու պահպանմանը վերաբերող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես պետական պահուստի նյութական արժեքների թարմացման և փոխարինման նպատակով, ինչպես նաև փոխառնման և ապամրագրման կարգով բացթողման, զորահավաքային նախապատրաստության շրջանակներում պետական պահուստի պաշարների օգտագործման, պետական պահուստի չնվազող պաշարում պահպանման ենթակա նյութական արժեքների օգտագործման, պետական պահուստի նյութական արժեքների անվանացանկի և կուտակման նորմերի մշակման, պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպություններում պետական պահուստի նյութական արժեքների կուտակման, բացթողման, թարմացման, փոխարինման, տեղաբաշխման ծրագրերի և առաջադրանքների կատարման նկատմամբ հսկողության, պետական պահուստի նյութական արժեքների միասնական հաշվառման կազմակերպման, դրանց առկայության ու շարժի ամփոփ հաշվետվությունն ու տեղեկատվությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն անհատապես կարգերը: Ստեղծվել է նաև նյութական պահուստի պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպությունը:

Տրանսպորտ

ԼՂՀ-ում օդային տրանսպորտը օգտագործելու նպատակով անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել Ստեփանակերտի օդանավակայանի շահագործման ուղղությամբ:

Օրենսդրական դաշտի ձևավորման նպատակով Նախարարության կողմից մշակվել են «Ավիացիայի մասին» ԼՂՀ օրենքը և նրանից բխող 18 ենթօրենսդրական ակտեր:

Նախարարությունը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության մասնագետների հետ համատեղ իրականացրել է Ստեփանակերտի օդանավակայանի շահագործման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ: Մասնավորապես իրականացվել են օդանավակայանի գեոդեզարտեզագրման աշխատանքները, ինչպես նաև օդային տարածքում խոչընդոտների ուսումնասիրությունները:

ԼՂՀ-ում տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման մակարդակը բարձրացնելու, ուղևորների փոխադրման անվտանգությունը բարելավելու, տեխնիկական զննություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների լիցենզիաների պայմանների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև շահագործվող տրանսպորտային միջոցների թարմացումն ու տեխնիկական վիճակի բարձրացումը ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել են ներկայացվել տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության լիցենզավորման գործընթացը կարգավորող 5 ենթօրենսդրական ակտեր:

Շարունակվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման գործընթացը, որի արդյունքում լիցենզավորվել է 25 տրանսպորտային կազմակերպություն:

Ընդերքօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել է նախարարություն ներկայացված հանքարդյունահանման լիցենզիա ստանալու հայտերը, որի արդյունքում տրամադրվել են 14 հանքարդյունահանման լիցենզիաներ, դադարեցվել են 6 հանքարդյունահանման լիցենզիաների գործողություն, կնքվել են 10 հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրեր, հատկացվել են 6 լեռնահատկացման ակտեր, վերածակերպվել են 2 հանքարդյունահանման լիցենզիաներ, կատարվել է 5 հանքարդյունահանման լիցենզիայով հավաստվող հանքային իրավունքի փոխանցում:

Կատարվել են աշխատանքներ տրամադրված հանքարդյունահանման լիցենզիաների մասով հերթական տարեկան պետական տուրքի, կոնցեսիոն վճարի և ռոյալթիի գանձման ուղղություններով:

Հաշվառվել և ուսումնասիրվել են ընդերքօգտագործողների կողմից յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով ներկայացվող օգտակար հանածոների արդյունահանված ծավալների շարժի մասին հաշվետվությունները:

Ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ առողջապահության նախարարությանը, ԼՂՀ ԿԱ շրջական միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը, ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությանը, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրված, դադարեցված և գանձված պետական տուրքի, տույժի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածի 2-րդ կիսամյակում նախարարությանն է վերապահվել ընդերքի ուսումնասիրության և հանքարդյունահանման նպատակով ընդերքի օգտագործման տրամադրման բնագավառի պետական կառավարման բոլոր լիազորությունները, ինչպես նաև հանքային իրավունքների իրականացման նկատմամբ վերահսկողությունը: Ընդերքի ոլորտի

բնականոն գործունեությունը չխաթարելու համար նախարարության կողմից տարվել են աշխատանքներ ընդերքի ոլորտում գործող օրենսդրական ակտերի վերանայման ուղղությամբ:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի պահպանման, արդյունավետ կառավարման, տնօրինման և օգտագործման պետական միասնական քաղաքականության իրականացման նպատակով մշակվել և ներդրվել է պետական գույքի հաշվառման միասնական համակարգ: Պետական գույքի հաշվառման համակարգի ներդրման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել ստանալ հստակ պատկեր պետական սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման վիճակի վերաբերյալ և կառավարությանը համապատասխան առաջարկություններ ներկայացնել պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Պետական գույքի հաշվառման միասնական համակարգը մշտապես լրամշակվում և արդիականացվում է՝ ապահովելով տեղեկությունների հավաստիությունն ու տվյալների հավաքագրման (նաև տրամադրման) անընդհատությունը: Օգտագործելով բազայում առկա տեղեկատվությունը՝ նախարարության կողմից աշխատանքներ են տարվել պետական գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների գրանցման ուղղությամբ:

Պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառվել են թվով 43 պետական կառավարչական հիմնարկ, 133 պետական ոչ առևտրային կազմակերպություն և 47 պետական մասնակցությամբ ընկերություն:

Գրանցամատյանում հաշվառվել է 27 պետական կառավարչական հիմնարկի 77072.57 քառ.մ ընդհանուր մակերեսով 340 միավոր և 82 պետական ոչ առևտրային կազմակերպության 108814.58 քառ.մ ընդհանուր մակերեսով 286 միավոր անշարժ գույք: Գրանցված 626 միավոր անշարժ գույքից 346-ը (87859.47 քառ. մ) կամ մոտ 55 տոկոսը չունեն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում: Հաշվառվել է նաև 176 պետական կառավարչական հիմնարկների և կազմակերպությունների 3.0 մլրդ սկզբնական արժեքով այլ հիմնական միջոցներ: Օգտագործելով գրանցամատյանում առկա տեղեկատվությունը՝ նախարարության կողմից ներկայումս աշխատանքներ են տարվում պետական գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների գրանցումն իրականացնելու ուղղությամբ:

Գրանցամատյանում գրանցված տեղեկությունների վերլուծությունների հիման վրա իրականացվել են ուսումնասիրություններ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն են ներկայացվել առաջարկություններ հաշվառման օբյեկտների արդյունավետ կառավարման վերաբերյալ:

Կանոնակարգվել է պետական գույքի դուրսգրման գործընթացը և աշխատանքներ են տարվել նրա հսկողության և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Պետական գույքի համապարփակ հաշվառման լիակատար իրականացման և պետական անշարժ գույքի օպտիմալացման նպատակով, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ պետության պահանջարկի հստակեցման, պետական անշարժ գույքի վերաբաշխումը իրականացնելու համար մշակվել և ներդրվել են ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներ:

Պետական գույքի մասնավորեցում

Մասնավորեցման ոլորտում օրենսդրական փոփոխություններ են կատարվել՝ ուղղված մասնավորեցման և օտարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, մասնավորեցվող օբյեկտների գնահատման գործընթացի կատարելագործմանը, մասնավորեցման պայմանագրային պարտավորությունների հստակեցմանը և դրանց կատարման դիմաց պատասխանատվության և վերահսկողության արդյունավետության բարձրացմանը :

Մշակվել են մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային մեթոդով գնահատման և պետական գույքի օտարման նոր կարգեր:

2008 թվականի ընթացքում գնահատվել է 21 օբյեկտ, մասնավորեցվել 36 օբյեկտ: Կազմակերպված 11 աճուրդով վաճառվել է 12 ավտոտրանսպորտային միջոցներ, 21 անշարժ գույքի օբյեկտներ: Ուղղակի վաճառքով օտարվել է 45 ավտոտրանսպորտային միջոց, 56 միավոր այլ գույք: Պետական բյուջե է մուտքագրվել 909.2 մլն. դրամ, որից 50.0 մլն դրամը՝ պետական գույքի մասնավորեցումից, 859.2 մլն դրամը՝ պետական գույքի օտարումից:

2008 թվականին իրականացվել է մասնավորեցված օբյեկտներում գնորդների կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ 14 ստուգում:

Մասնավորեցման գործընթացում ներդրումային պարտավորությունների կատարումը գործընթացի ամենաթույլ կողմերից է և այս ուղղությամբ Նախարարության կողմից համապատասխան աշխատանքներ են տարվել ուղղված վերահսկողության ուժեղացմանը, համապատասխան իրավական դաշտի ձևավորմանը, սուբյեկտների հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը և պատասխանատվության բարձրացմանը:

Հասարակայնության հետ կապերի խորացում

Հասարակայնության հետ կապերի խորացման և նախարարության գործունեության թափանցիկության ապահովման նպատակով պատրաստվել է նախարարության ինտերնետային կայք էջը:

Կարևորելով հասարակության մասնակցությունը տնտեսական զարգացման քաղաքականության մշակման գործում և առաջնորդվելով որոշումների կայացման փուլում պետություն-հանրություն ակտիվ համագործակցություն հաստատելու սկզբունքով, Նախարարության ինտերնետային կայք էջում նախատեսվել է «Հանրային քննարկմանն ներկայացվող նախագծեր» բաժինը, որտեղ կտեղադրվեն Նախարարության կողմից մշակված բոլոր նախագծերը՝ ակընկալելով քաղաքացիների և գործարար շրջանակների ներկայացուցիչների կարծիքների և առաջարկությունների ներկայացումը:

Գործարարության հետ համագործակցության խորացման, գործարար շրջանակի ներկայացուցիչների հետ հաղորդակցության նոր և առավել մատչելի մեխանիզմների ձևավորման նպատակով կայք էջում գործում է Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության բաժինը, որը հնարավորություն է տալիս գործարարներին ներկայացնել իրենց հուզող հարցերը և առաջարկությունները՝ Գործարարության աջակցման խորհրդում քննարկելու նպատակով:

Ընթացիկ այլ գործունեություն

Հաշվետու ժամանակահատվածում նախարարություն է ներկայացվել ավելի քան 1300 գրություն, որից ավելի քան 220 քաղաքացիներից դիմումներ: Բոլոր գրություններին տրվել են պատասխաններ ու համապատասխան լուծումներ:

Նախարարության կողմից տրամադրվել է 42 լիցենզիա, որից 14 հանքարդյունահանման, 25 ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման, 3 պարզ և ուժը կորցրած է ճանաչվել 9 լիցենզիա, որից 6 հանքարդյունահանման, 3 պարզ:

Պետության շահերի պաշտպանության բնագավառում, կապված մասնավորեցման և վարկային պայմանագրերով սահմանված պայմանների խախտման հետ, ԼՂՀ առաջին ատյանի դատարան է ներկայացվել 6 հայցադիմում, որոնք ԼՂՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով բավարարվել են:

2. ԼՂՀ 2008թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության պահպանման և ծրագրերի իրականացման ծախսերը

/հազար դրամ/

N	Անվանումը	Հաստատված	Փաստացի	Կատարողական /տոկոս/
1	Նախարարության կառավարման ապարատի պահպանման ծախսեր	119477,9	87914,4	73,6
2	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության համակարգի գույքի ձեռքբերման ծախսեր	15000,0	1399,7	9,3
3	Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին	1500000,0	1500000,0	100,0
4	ԼՂՀ երկրաբանական լաբորատորիա պահպանման ծախսեր	6307,4	6304,6	99,9
5	«Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցություն	3785,0	3784,9	100,0
6	«Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ին ծառ. -ի գնման գծով պետպատվեր	4136,4	4136,4	100,0
7	Զգործող պետական ձեռնարկությունների գույքի պահպանման ծախսեր	3500,0	2122,8	60,7
8	Սեյսմիկ անվտանգության խախտումների հայտնաբերման և դրանց վերցման ծախսեր	4500,0	1842,5	40,9
9	«Տեխնիկական անվտանգության կենտրոն » ՊՈԱԿ	11260,5	0.0	0.0
	Ընդամենը	1667967,2	1607505.3	96,4